ԱԶԳԱՅԻՆ

Խմբագրութեան Արարատ ամսագրոյ.

Շամախուց 18 վերստ հեռի, Սաղիան գիւղի մօտ գտնվող Սուրբ Ստեփաննոսի վանքի եկեղեցին, ուր կատարվումէր, որպէս նոյն Սաղիան գիւղի, նոյնպէս և մերձակայ վեց գիւղերի Հայազգի ժողովրդոց հոգևոր օրէնքները և եկեղեցական պաշտամունքը, ժամանակի հնութիւնից և ստէպ ստէպ պատահած երկրաշարժութիւնից քայքայուել կործանուել էր իսպառ։ Ամեն մի զգայուն սիրտ տեսանելով մի կողմից այդ հոչակաւոր Մենաստանի աւերակ դրութիւնը, որ մնալով այնպէս պէտք է անհետանար մեր արժանայիշատակ նախնիքների նուիրական յիշատակը, և միւս կողմից յիշեալ գիւղերի բազմաթիւ ժողովրդոց տառապանքը քրիստոնէական Աստուածպաշտութեան կողմից՝ չէր կարող ապաքէն անտարբեր մնալ դէպի այս սրբավայրը և ժողովրդոց նեղակրութիւնը, ուստի ես յուսալով Ամենաբարձրելոյ օգնականութեան և բարեպաշտոն Հայ ժողովրդոցս ջերմեռանդութեան վերայ՝ Բարձրագոյն Հոգևոր իշխանութեան թոյլատուութեամբ 1879 թուականում ձեռնարկեցի վերականգնել այս սուրբ ուխտը, ծախելով նորա վերայ, թէ Էջմիածնայ Սինոդում գտեալ այս նպատակի համար հանգանակուած 2095 բուբլի 60 կոպէկն, և թէ հետ զհետէ բարեպաշտոն ժողովրդից ստացած նուիրաբերութիւնքը, և այժմ այս հոյակապ տաճարը գրեթէ կիսով չափ շինուածէ։ Բագուայ Հայ ժողովրդոց օրինակելի ջերմեռանդութիւնը ամէն մի Աստուածահաճոյ բարեգործութեան մէջ, նոցա աղնիւ ձգտումը և համակրութիւնը դէպի ամէն ազգային և եկեղեցական ձեռնարկութիւնները՝ խոստանումէին ինձ մեծ յոյս, որ նոքա մի օր ևս կօգնեն յիշեալ եկեղեցոյ շինութեանը, և այդ իսկ նպատակաւ անցեալ Յունվարի վերջում դիմեցի նոցա օգնութեանը։ Այս բարեմիտ ժողովուրդը չընայելով իրանց այժմեան աննախանձելի դրութեանը առանձին ջերմեռանդութեամբ ընդունեցին իմ յորդորանքը և առատ նուիրաբերութեամբ մասնակցեցին Աստուծոյ տան շինութեան սուրբ գործին։ Ահա նուիրատուաց անունները՝ Եգոր Քալանթարեանց 400 բուբ. Մուսայէլ Շահակետանեանց 250 բուբլի, Սամուէլ Բաղիրեանց 200 բ. Ներսէս Կրասիլնիկեանց 200 բ. Թադէոս .ա քահանայ Բուտաղեանց 100 բ. Մինաս և ամուսին նորա Հողակաթ Մելիքեանց 100 բ. Գրիգոր Թումայեանց 100 բ. Յակոբ Ադամեանց 100 բ. Ոսկան Խաչատրեանց 100 բ. Գէորգ Միրզաբէգեանց 100 բ. Ստեփան Տէր Օհանեանց Սարգիս և Անդրէաս Մելիքեանց 100 բ. Միկիտ Վարդանեանց 100 բ. Գրիգոր Դելդարեանց 100 բ. և եկեղեցոյ պատուհանների բոլոր երկաթեայ վանդակները. Ստեփան Թադէոսեանց, Միրզայ Ամամալեանց, Սարգիս Հարաբանդեանց, Գրիգոր Ասլանեանց, Թովմաս Ամիրեանց,

Սահակ Դաղաշեանց, Գրիգոր Այվազեանց, Եղիա Եղիազարեանց, Վարդան Վարդանեանց, Առաքել Ծատրեանց և Պօղոս Սարգսեանց իւրաքանչիւրը 50 ական բուբ. Յակոբ Ապրէսեանց, Գաբրիէլ Ալիբէգեանց Յովհաննէս Մելիք Շահնազարեանց, Օհանջան Հախումեանց, Աւետիս Վարաբէգեանց, և Աղէքսանդր Կուզնեցեանց իւրաքանչիւրը 25 ական բ. Հայրապետ Հախումեանց 30 բուբլի, Հայրապետ Ղուլբանդեանց և կոյս Անթառամ Վարդանեանց 20 ական բուբ. Հուշան վէքիլեանց, Ներսէս Սարուսեանց, Խորէն քահանայ Միրզարէգեանց, Գրիգոր քահանայ Գրիգորեանց, Յովսէփ քահանայ Աշուղեանց, բժիշկ Միքայէլ Տէր Յոհաննեանց, Խաչատուր Սէրգէյեանց, Յովսէփ Թումայեանց, Իվան Միրզայ Աւագեանց և Աղաջան Յոնանեանց իւրաքանչիւրը 10 ական բ. Աբրահամ քահանայ Աբրահամեանց և Ստեփան Խսահակեանց 5 ական բ. ընդ ամէնն է 2930 բուբլի։

Յայտնելով իմ խորին գոհունակութիւնը վերոյիշեալ բարեսէր նուիրատուներին՝ մաղթումեմ նոցա՝ երկնային օրհնութեան և պարգևատուի առատ ողորմութիւնը։ Իմ առ ի սրտէ շնորհակալիքը յայտնումեմ և օրհնում նոյնպէս Ասիապատու զօրաբանակում գտնվող Հայազգիներին, որոնք քրիստոնէական ջերմեռանդութեամբ մասնակցել են այս սուրբ գործին, հանգանակելով իրանց մէջ բարեկրօն Գրիգոր քահանայ Յովսէփեանցի ձեռամբ 150 ր. 50 կ. որը և հասած է մեզ լրիւ ստորագրութեան մատեանի հետ։

Կառավարիչ թեմին Շամախւոյ. Թադէոս Եպիսկոպոս։

Խմբագրութեան Արարատ ամսագրոյ.

—

Թելաւի Երկսեռ Հոգևոր Հայ ուսումնարաններից օրիորդական Ս. Գայիանեան ուսումնարանում ուսանում են 110 աշակերտուհիներ, իսկ տղայոց Ս. Վարդանեան դպրոցում 80 աշակերտներ, որոնցից առաջին դպրոցը բաղկացած է բացի «մանկական պարտէզից» երեք դասարանից, այն է՝ փոքր նախակրթարանը առանձին դասատան մէջ է տեղաւորուած. նախակրթարաններից Բ. և Գ. բաժանմունքը գտնվումէ մի դասատան մէջ, և Ա. և Բ. դասատան աշակերտուհիները նոյնպէս ուսանում են մի դասատան մէջ՝ կազմելով երկու բաժանմունք։ Տղայոց ուսումնարանը բաղկացած է 2 դասարանից նախակրթարանների 3 բաժանմունքները տեղաւորուած են մի դասատան մէջ և Ա. դասատուն առանձին՝ 2 բաժանմունքներով։—

Աւանդվում են ծխական դպրոցներին վերաբերեալ առարկայքը, իսկ օրիորդաց ուսումնարանում նաև ձեռագործ։—

Դասախօսում են հինգ ուսուցիչներ և 2 վարժուհիներ։—